

Վ. ԱՃԵՄՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ
40-ԱՄՅԱԿՈՒՄ ԵՎ ԳՐԱՊԱՅՔԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

18-րդ դարում արևմտահայ աշխարհաբարը սկսել էր տարածվել և գրաբարի փոխարեն օգտագործվել ժողովրդական խավերի համար նախատեսված աշխատություններում: Նրա ֆունկցիաներն ավելի են ընդլայնվում 19-րդ դարի առաջին տասնամյակներում: Աշխարհաբարը մոտք է գործում նորանոր բնագավառներ՝ գրականությունը մատչելի դարձնելով ժողովրդին: Միաժամանակ շարունակվում է գրաբարի տեսականասիրումը Պոլսում, Վենետիկում, ինչպես նաև Վիեննայի նորահաստատ Մխիթարյան միաբանությունում: Գրաբարի քերականությունն են գրում Հ. Գաբրիել Ավետիքյանը (Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ 1815, Վենետիկ), Հ. Վ. Չալըխյան (Քերականութիւն հայկաղեան լեզուի, 1827, Վիեննա), Գրիգոր Փեշտիմալճյանը (Քերականութիւն հայկաղեան լեզուի, հաւաքեալ ի քերականական մատենից երևելի հեղինակաց, 1829, Կ. Պոլիս): Մխիթարյանները ջանք են գործ դնում մաքրելու գրաբարը իր լատինաբան ձևերից, շարունակելով այդ ուղղությամբ Մխիթար Սեբաստացու սկսած գործը:

Ժողովրդի մեջ դասական գրականության ճաշակն արթնացնելու նպատակով, նրանք ձեռնարկում են մեր հին մատենագրությունների վերահրատարակման գործին. իրար հետևից լույս են տեսնում Հովհան Օձնեցու «Ընդգէմ երևութականաց» ճառը 1807-ին, Եվսեբոսի «Քրոնիկոնը» Հ. Մ. Ավգերյանի աշխատասիրությամբ 1818-ին, Հովհան Ոսկերեբան 1826-ին, 1824-ից 1829 հրատարակվում են Ծգնիկ, Խորենացի և Ծղիշե, 1830-ին՝ Բարսեղ Կեսարացու ճառերը, 1832-ին՝ Զենոբ Գլակ, Փավստոս, 1833-ին՝ Կորյուն, Մամբրե, Դավթ Անհադթ, 1835-ին՝ Ագաթանգեղոս, 1836-ին՝ Եփրեմի մատենա-

գրութիւնը, 1828-ին՝ Եղիշեի մատենագրութիւնը, 1840-ին՝ Նարեկացու մատենագրութիւնը, 1843-ին՝ Խորենացու մատենագրութիւնը և այլն:

Մեր նախնիների լեզուն շատերին է հրապուրում իր գեղեցկութեամբ ու ներդաշնակութեամբ: Գրաբարն այս շրջանում շարունակում է օգտագործվել որպէս գրական լեզու, քանի որ ոչ միայն նրանով լույս են ընծայվում բազմաթիվ պատմահնախոսական և կրոնաբարոյական աշխատութիւններ¹, այլև գրաբարի են թարգմանվում համաշխարհային գրականութեան աչքի ընկնող երկերը²: Սակայն, հակառակ այս բոլոր շանքերին, գրաբարը վերականգնանալ չէր կարող. նա այլևս իր դարն ապրած լեզու էր, որ անհրաժեշտորեն պետք է իր տեղը զիջեր, ճիշտ է դեռևս սնմիօրինակ, բայց կենսունակ աշխարհաբարին: Հետաքրքրական վկայութիւն է տալիս այդ կապակցութեամբ Վենետիկում լույս տեսնող Դիտակ Բիւզանդեան³ երկշաբաթաթերթի առաջաբանը. այդտեղ բացատրվում է, որ նկատի առնելով այն հանգամանքը, որ գրագետ ժողովրդի մեծ մասը գրաբարը դժվար է հասկանում, Դիտակը հրատարակվում է աշխարհաբարով, «ամմէնուն խաթրը խօշ ընելու համար... որ ամմէնքը օգտին շահին, ու ամմէն մէկը իրեն վիճակին կեօրէ, իրեն գիտութեանը կեսօրէ տեղեակ ըլլալն աշխարհիս մէջ եղած ըանհրուն վրա»³:

¹ Յույր տալու համար գրաբար հրատարակութիւնների մեծ քանակը այդ ամսանակաշրջանում, ավելորդ չենք համարում այստեղ գնել նրանցից մի քանիսի տեղում. Զամյանի «Նուագարան օրհնութեանց»-ը լույս է տեսնում 1801-ին, «Պատկեր տօնից Ս. Աստուածածնի»-ն՝ 1805-ին, «Սեղան խնկոց»-ը՝ 1816-ին Ավետիքյանի «Նարեկ աղօթից»-ը՝ 1801-ին և 1827-ին, «Մեկնութիւն թղթոց սրբոյն Պօղոսի», 3 հատորով՝ 1808-ին, 1811-ին և 1812-ին, «Բացատրութիւն շարականաց»-ը՝ 1814-ին, «Ծառ յաղագս բղթման հոգւոյն օրբոյ ի հօրէ և յօրհայոյ»-ն՝ 1824-ին, Խնճիճյանի՝ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց»-ը՝ 1822-ին, «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի»-ն՝ 1835-ին և այլն:

² Եղիա Թովմաճյանը թարգմանում է Ոսկերեւանի ճառերը 1818-ին, Պլուտարքոսի «Զուգակշիռ»-ը՝ 1832-ից 1834 թվականներին, «Իլիական»-ը տաղաչափված և հանգավոր՝ 1843-ին. Մանվել Զախշախյանի թարգմանութեամբ 1825-ին լույս է տեսնում Կեսների «Ի մահն Աբելի» քերթվածը, 1826-ին՝ Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ»-ն, 1830-ին՝ Սիգրոնիոս Հոշիոս բանաստեղծի «Եղերեգութիւնք ի շարչարանս Քրիստոսի»-ն. Հարութիւն Ավգերյանը թարգմանում է Միլտոնի «Դրախտ Կորուսյալ»-ը 1827-ին. Ա. Բագրատունին թարգմանում է Սափեյի «Արվեստ Բանական»-ը խալիբրենից 1825-ին և Թեոփրաստի «Նկարագիր»-ը հունարենից 1830-ին. Ե. Հյուրմյուղը 1825-ից 1829 թվականներին ֆրանսերենից թարգմանում է Ռուսնի «Գաղղիացու, Հնախօսութիւն»-ը և այլն:

³ Դիտակ Բիւզանդեան, 1812 օգ. 1, էջ 5:

Զմյուռնիայում լույս տեսնող «Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի հրատարակիչները նույնպես շեշտում են, որ ժողովրդի օգտի համար անհրաժեշտ է այդ հանդեսը լույս ընծայել «ոսմակօրեն»-ով: Գրաբարը գեղեցիկ լեզու է, սակայն նրանով գրել, ըստ նրանց, հավասարազոր է «գիտութիւնը կղպանքի տակ դնել» ու, «օգն ու ջուրը արգիլել»-ու հասարակ ժողովրդին¹:

Այսպիսով, հրապարակագրության լեզու դարձավ ոչ թե գրաբարը, այլ հանրամատչելի աշխարհարարը: Արևմտահայ հրապարակագրության առաջին փորձը Ինճիճյանի «Տարեգրութիւն»-ն է, որ սկսում է լույս տեսնել 1800 թվականին Վենետիկում, և որ ժողովրդի խոսած լեզվով տեղեկութուններ էր հաղորդում տարվա քաղաքական, գիտական, կրոնական անցուղարձերի մասին: Մինչև 19-րդ դարի 40-ական թվականները, բացի «Դիտակ Բիւզանդեան»-ից և «Շտեմարան»-ից, հրատարակվում են նաև «Եղանակ Բիւզանդեան»-ը Վենետիկում, 1803—1820 թ. (խմբ. Ղ. Ինճիճյան), «Թաքվիմի վագայի լրոյ գիր»-ը, որ հետո անվանվեց «Լրոյ Գիր մեծի տէրութեանն Օսմանեան», 1832—1833 թ., սա Պոլսի անդրանիկ աշխարհաբար լրագիրն է. նրան հաջորդում է 1840 թ. «Ազդարար Բիւզանդեան» շաբաթաթերթը, որ հրատարակվում է Խաչատուր Ոսկանյանի ջանքերով: Նույն 1840 թ. Զմյուռնիայում սկսում է լույս տեսնել «Արշալոյս Արարատեան»-ը Ղուկաս Պալղազարյանի խմբագրությամբ:

Այս ժամանակաշրջանում գրաբարի ֆունկցիաների սահմանափակման ապացույցներից մեկը արևմտահայ աշխարհաբարի մուտքըն է թատրոնի ասպարեզը, Մխիթարյանների ջանքերով դեռևս 1760-ից առաջ Ս. Ղազարում սկսվել էր հայ թատերագրությունը գրաբար լեզվով: 1807 թվից արդեն, նրանք ստիպված են լինում, գրաբար ողբերգություններ է հետ միասին, ներկայացնել աշխարհաբար կատակերգություններ, ինչպես «Ընչաքաղց խազնէ սառաֆ», «Աւամ հրեայ», «Հաճի թըլթըլ», «Խելոք Դաւիթ» և այլն²: Վենետիկից բեմադրական շարժումը անցնում է Պոլս, ուր 1815 թ. Հ. Մինաս Բժշկյանը աշխարհաբար լեզվով պատմական ու զավեշտական պիեսներ է ներկայացնում Տյուզյան պալատում (Գուրու Չեշմէ)³:

Աշխարհաբարի տարածումը պատճառ է հանդիսանում, որ խախտվի արևմտահայերի ավանդական սովորություններից մեկը,

¹ Շտեմարան պիտանի գիտելեաց, Զմյուռնիա, 1839, էջ 1:

² Բազմավեպ, 1934 թ., էջ 46:

³ Հ. Մեսրոպ Ժանադեան—Պատմութիւն արդի հայ գրականութեան, Վենետիկ, 1953, էջ 304:

այն է՝ տապանագրերը միայն եկեղեցու պաշտոնական լեզվով՝ գրաբարով գրելու սովորությունը: Զանազան տեղեր հրատարակված և մեր ձեռքը անցած Պոլսի տապանագրերը վկայում են, որ մինչև 19-րդ դարի սկիզբը տապանագրերը գրվում էին գրաբար լեզվով: Ճիշտ է, այդ գրաբարի մեջ հետզհետե թափանցում էին աշխարհաբարի որոշ տարրեր, սակայն բուն արևմտահայ աշխարհաբարով գրված տապանագրերը վերաբերում են 19-րդ դարի առաջին տարիներին¹:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս շրջանում արևմտահայ աշխարհարարն սկսում է օգտագործվել որպես թարգմանություն լեզու: 1818 թվականին Հ. Մինաս Բժշկյանը ֆրանսերենից թարգմանում է երկու վեպեր՝ «Ռոբենտոն Քրուզո» և «Մոռապիլոթին Նդիսաբեթի», որոնք արևմտահայ աշխարհաբարով լույս տեսած անգղանիկ վեպերն են²:

1810 թ. հրատարակվում է արևմտահայ աշխարհաբարով բանաստեղծության մի գիրք՝ «Բանաստեղծություն 4 ետքերնուս վրայ», որի հեղինակն է Հ. Մ. Ավգերյանը:

Աշխարհաբարով դասագրքեր գրելու սովորությունը, որ արդեն 18-րդ դարում գոյություն ուներ, շարունակվում է նաև 19-րդ դարի առաջին կեսին: 1808-ին Տ. Հարություն քահանա Մեսրոպյանը գրում է պոլսահայ բարբառով գրաբարի մի քերականություն, որ վերահրատարակվում է 1826-ին: 1815-ին Գաբրիել Ավետիքյանի գրաբարի քերականության առաջին մասը լույս է տեսնում աշխարհաբարով: 1819-ին նույն հեղինակը հրատարակում է գրաբարի մի ուրիշ քերականություն՝ դարձյալ արևմտահայ աշխարհաբարով: 1817-ին վերահրատարակվում է Սյուրմեյանի թվաբանությունը: 1838-ին Տերոյենցի «Ընթացք հայերէն դպրութեան» գրաբարի քերականությունը նույնպես աշխարհաբար լեզվով է:

Բացի դասագրքերից, հրապարակախոսական և գեղարվեստական գործերից, 19-րդ դարի առաջին կեսին արևմտահայ աշխարհաբարով գրվում են նաև պատմական աշխատություններ, ինչպես՝ Հ. Մինաս Բժշկյանի «Պատմութիւն Պոնտոսի»-ն 1819-ին, Հ. Ղ. Ինճիճյանի «Դարապատում»-ը 1824-ին, Հ. Նիդեմ վարդապետի «Պատմութիւն չորից ինքնակալութեանց»-ը 1833-ին: Լույս են տեսնում բնագիտական և բժշկական գրքեր, որոնց թվին Հ. Օղուլլուխյանի «Նիւթ բժշկականը», 1806-ին, Հ. Մեսրոպ Աղաշրագյանի «Արուեստաբանութիւն»-ը 1821-ին, բժիշկ Մ. Բեստենի «Բժշկական արուեստ»-

¹ Հայ գրականությունը առաջանալիքներու վրայ, Բաղձավեպ, 1929, էջ 17—18:

² Վեպը թարգմտուց մեջ. Մադիկ, 1903, № 32—33:

տին կրթութիւնը» 1833-ին. նաև կենցաղադիտական աշխատութիւններ՝ Փափազյանի «Քաղաքավարութիւն»-ը 1806-ին, Աղաշրապյանի «Բնական օրէնք կամ կրթութիւն առ ի լինել բարի և պարկեշտ քաղաքացի» 1819-ին, Փեշտիմալճյանի «Կրթութիւն քաղաքավարութեան»-ը 1829-ին, Հրատարակվում են աշխարհաբար լեզվով կրօնական գրքեր՝ Հ. Հ. Զոհրաբյանի «Աստվածաշնչի պատմութիւն»-ը 1803-ին, Հ. Մ. Ավգերյանի «Դեղ Կենաց»-ը 1810-ին, Նոր Կտակարանը Փարիզում 1828-ին, Զմյուռնիայում 1841-ին և 1842-ին, Սաղմոսը 1843-ին և այլն:

Այսպիսով, շնայած գրաբար հրատարակութիւնների մեծ քանակին, 19-րդ դարի առաջին 40-ամյակում նկատելի է արևմտահայ աշխարհաբարի օգտագործման ոլորտների ընդլայնում ի հաշիվ գրաբարի, որ արդեն անմատչելի էր դարձել հասարակ ժողովրդի համար: Այն փաստը, որ արևմտահայերի մոտ հրապարակագրութիւնը սկսվեց ոչ թե գրաբարով, այլ աշխարհաբարով, ապացուցում է, որ վերջինս սկսում էր դուրս գալ երկրորդական գրական լեզվի սահմաններից, որոնց մեջ նա մնացել էր 18-րդ դարում:

Այս ժամանակաշրջանը միևնույն ժամանակ աշխարհաբարը մշակելու փորձերի շրջան է: Հեղինակներին զբաղեցնող գլխավոր հարցը աշխարհաբարի մաքրութեան հարցն է. ուստի մենք կանգ կառնենք հատկապես այդ կետի վրա:

Տարբեր ու բազմազան արևմտահայ բարբառների միջից Պոլսի բարբառը այս շրջանում մեծ տարածում է ձեռք բերում: Արդեն 18-րդ դարում նա որպես գրավոր լեզու սկսել էր գերակշռութիւն ունենալ մյուս բարբառների վրա, շնորհիվ Պոլսի տեղագրութեան եխաղացած դերի արևմտահայերի կյանքում: 19-րդ դարի առաջին տասնամյակներում պոլսահայերի մտավորական կյանքն ավելի աշխուժանում է. 1802—1813 թ. Հովհաննես պատրիարքի օրով ամեն թաղ ունի իր վարժարանը¹: 1812 թ. կազմակերպվում է առաջին հայ հրատարակչական ընկերութիւնը²: Այդ ժամանակ է, որ Պոլսում գործում էին այնպիսի հայտնի հայագետներ, ինչպիսիք էին Դրիգոր Փեշտիմալճյանը, էրզրումցի Տ. Մեսրոպ քահանան, պրուսացի Տերոյենց պատվելին: Մյուս կողմից պոլսեցի էին Մխիթարյաններ Զամչյանը, Ինճիճյանը, Ավետիքյանը, Թովմաճանյանը, որոնք բնականաբար պետք է նախընտրութիւնը տային Պոլսի բարբառին:

Սակայն սխալ կլինեն Պոլսի բարբառ հասկացութիւնը վերցնել:

¹ Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ հիւանդանոցի, Պոլիս, 1901, էջ 176:

² Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ հիւանդանոցի, 1901, էջ 177:

նեղ իմաստով, որպես միայն բնիկ պոլսեցիների տեղական խոս-
վածքը: Պոլսը դարձած լինելով արևմտահայերի մտավոր և քաղա-
քական կյանքի կենտրոնը գաղութներից մշտապես այնտեղ էին հո-
սում հայերի խմբեր, որոնք փրենց հետ բերում էին իրենց խոս-
վածքների առանձնահատկությունները. Պոլսի բարբառի մեջ հետըզ-
հետե թափանցում էին այդ գավառաբարբառների տարրեր, այնպես
որ երբեմն բուն պոլսահայ աշխարհաբարով գրված աշխատություն-
ներում հանդիպում են որոշ ձևեր, որոնք Պոլսի բարբառի համապա-
տասխան ձևերից տարբերվում են. օրինակ. էգի (Պ. բրբռ. այգի),
իծմով (Պ. Բ. իզմով), իծմէն (Պ. Բ. իզմէն, իսմէ, ինձմէ, ինէ), էրադ
(Պ. Բ. էրած), ոխճուն (Պ. Բ. օխճում) և այլն:

Պոլսահայ աշխարհաբարն այդ ժամանակաշրջանում ծանրա-
բեռնված էր թուրքերեն բառերով ու յոճերով: Այդպիսի լեզվով սկը-
նեց լույս տեսնել 1800 թվականին Ինճիճյանի «Տարեգրութիւն»-ը,
որ նախատեսված էր ժողովրդական լայն խավերի համար: Թուրքե-
րենից վերցված բայերով, գոյականներով, ածականներով, ինչպես
նաև մակբայներով, շաղկապներով ու մասնիկներով չափից դուրս
խճողված է 19-րդ դարի սկզբներին վերաբերող Տ. Մեսրոպ բահա-
նայի Քերականության, Մ. Ավգերյանի աշխատությունների և Դի-
տակ Բյուզանդյանի առաջին տարիների լեզուն:

Թուրքերենից երեք ձևով փոխառյալ բայեր են օգտագործված
19-րդ դարի սկզբի թուրքերենախառն արևմտահայերենում:

1.—Դերբայական միջ ձևով փոխառյալ բայեր, որոնց կցված
է հայերեն օժանդակ բայ. ինչպես՝

Իւրքմիշ Ելլալ.— ձինքը սիրտ պիտի ունենայ, սրտոտ պիտի
Ելլայ, որ թօփի թիւֆենկի ձախէն չառնէ, թշնամիներու բազմութե-
նէն կամ էօրֆէն իւրքմիշ չԵլլայ:

Ելլէնմիշ Ելլալ.— ասանկ անգործ և պարապ մարդ կը փնտռէ՝
որ հետը էլլէնմիշ Ելլայ².

Ձէֆլէնմիշ Ելլալ.— ձեխտ աղէկ՝ զէֆլէնմիշ կԵլլաս կոր³:

2.—Գոյականով և օժանդակ բայով կազմված որոշ բաղադրյալ
բայերի առաջին եզրը վերցված է իր թուրքերեն ձևով, իսկ օժանդակ
բայը թարգմանված է հայերենի⁴. օրինակ՝

¹ Մ. Աւգերեան, Դեղ Կենաց. Վէնէտիկ, 1810, էջ 210.

² Նույն տեղում, էջ 102.

³ Մ. Աւգերեան, Բանաստեղծութիւն շորս ետքերնուս վրայ. Վէնէտիկ, 1810,
էջ 95.

⁴ Այս կարգի բայերը չեն հիշված Հ. Աճառյանի կողմից, իր «Գրեություն
պոլսահայ բարբառի» աշխատության «Թուրքերենից փոխառյալ բայեր» գլխում:

ալը ըլլալ (ալթ օլմագ).—«Իրաւը նայինք նէ ան օրվան պատե-
րազմով ալթ շեղավ նեմցէն»¹:

տավէր ընել (տավէթ էթմեք).—«Ուրախերես պազի պաղի տա-
վէթ կընես՝ մարդ երկնքի»²:

եան գալ (եան կելմեք).—«Ատոր համար ծոյլը վըսուի նաև
փետրալից բարձ սատանայի, որու վրայ եան կուգայ»³:

Յ.— Թուրքերենից փոխառյալ արմատով և հայերեն վերջավո-
րությամբ կազմված բայեր. ինչպես՝

խալըսիլ, քըֆուիլ⁴.— «Յոյս չունիմ՝ խալըսիլ՝ շար գերի կը քըֆ-
ուիմ, կը պոռամ, շահ չունի»⁵:

պաշլայել. — «Անկատար բանն այն է որ պաշլայած խօսքը այն.
պէս կիսատ կը թողու որ լսողը կը նայի թէ տահա ի՞նչ պիտի ըսվի»⁶:

Թուրքերեն գոյականներն ու ածականները ազատորեն օգտա-
գործված են նախադասութեան մեջ, այն աստիճան, որ երբեմն որոշ
հատվածներ անհասկանալի են թուրքերենին շտիրապետող ընթեր-
շողներին համար.

Օրինակ՝ «Կրակե գինճիլով աս բանտի

Կապկըպած է մարմինս խասխաթի

Յալախայ տէյնէկ զապիտի

Հոգւոյս ալ կը յեղթէ իմատի»⁷:

«էն առջինը պէլլի ւն»⁸:

«Պիւթիւն նէմցէին բանը աւրեց»⁹:

«Ինչպէս Համշուն մէջ ետ մնացողը՝ պէտք է որ նոր խայրէթի
խոնայ, չափընով առաջ քաշէ. որ առաջ գացողներուն հասնի: Չար-
լըի հիսապով ալ երթաս նէ, անցած տարրուան օէտէրդ աս տարի
հանելու պէտք է որ նոր խայրէթի մը գաս»¹⁰:

Հաճախակի օգտագործված թուրքերեն մակբայներից հիշենք

¹ Տարեգրութիւն Վլենտիկ, 1801, էջ 4:

² Մ. Աւգերեան, Բանաստեղծութիւն չորս ետքերնուս վրայ, Վլենտիկ, 1810,
էջ 15:

³ Մ. Աւգերեան, Դեղ Կենաց. Վլենտիկ, 1810, էջ 102:

⁴ Այս 2 բայերի արմատները արաբերենից են անցել թուրքերենին:

⁵ Մ. Աւգերեան, Բանաստեղծութիւն չորս ետքերնուս վրայ, Վլենտիկ, 1810,
էջ 88:

⁶ Փերականութիւն Տ. Յարութիւն քհնյ. Տ. Մեսրոպեանի, 1808, Կ. Պոլիս, —
«Արևելք», 1898, № 4100:

⁷ Մ. Աւգերեան, Բանաստեղծութիւն չորս ետքերնուս վրայ, էջ 88:

⁸ Դիտակ Բիւղանգեան, 1812, էջ 32:

⁹ Տարեգրութիւն, 1801, էջ 4:

¹⁰ Մ. Աւգերեան, Դեղ Կենաց, էջ 273:

պիլէ, շոշ, պազի, տահա, կէնէ, իշտէ, իլլէ, ինչխտար, անխտար
(այս վերջինների միայն կեսն է թուրքերեն), օրինակներ՝

«շատերը վախցուց, իլլէ տան մէջ բարձրը տեղ նստողը»¹,

«զերէմ շեն գիտեր պիլէ մարդու պէս»²,

«երրորդ անգամ սիրտ ըրաւ կէնէ երկինքը ելլելու»³,

«բանականութիւնը գեղեցիկ դարդարող արհեստն որ է այս քե-
րականութիւնս, իշտէ հեշտ ճանապարհաւ հազըր առջևդ ունիս վա-
յելել որ անխըտար պէճիդ պէտք է ամէն մարդու սորվիլ ու գիտնալ
ինչխտար որ հարկաւոր է ամէնումն ունենալ բանականութիւնը»⁴,

«Հիշ որ չէ նէ, եա տգոց ձան կըլլայ, եա յտից ձան մը կուգայ
մէկը սանկ, մէկը նանկ պատճառ կըլլայ, տր ուզածնու պէս աղօթք
շենք կրնար ընել, հիշ մէկ մահանայ ալ չըլլայ, պաղի տըրպայ մար-
դուն սիրտը կարծես թէ կը քարսնայ, հիշ համ շառներ աղօթքէն-
անոր համար տահա աղեկ կերենայ աղօթք շընելը քան թէ անանկ
աղօթքի նստիլը»⁵,

Վերջապես այս ժամանակաշրջանի գրավոր արևմտահայերե-
նում բազմաթիւ են թուրքերենից վերցված շաղկապները, ինչպես
ամա, դէյի, զէրէ, զէրէմ, իլէն, յօխսա, շիւնքի և այլն։ Շատ գոր-
ծածական են նաև թուրքերեն մի, էն, փոր մասնիկները։

Արևմտահայ աշխարհաբարը սակայն այդ վիճակում չմնաց,
Դեռևս 18-րդ դարի վերջից փորձեր էին արվել գրելու մաքուր լեզ-
վով⁶։ Այսպես, համեմատաբար մաքուր աշխարհաբարով է, 1791-ին
հրատարակված՝ Ղ. Խնճիճյանի Աշխարհագրությունը. նույնպիսի
լեզու է օգտագործել Չամչյանը 1789-ին գրած իր մի անտիպ աշ-
խատութիւնում⁷։ Թուրքերեն բառերից խուսափելու համար հեղի-
նակները հետզհետեւ ձգտում են գրաբարից վերցնելու նրանց հա-

¹ Դիտակ Բիւղանդեան, 1812, էջ 32:

² Նուրս տեղում, էջ 26:

³ Նուրս տեղում, էջ 35:

⁴ Հատված Տ. Մեսրոպ քահանայի 1808-ին հրատարակած գրաբարի քերա-
կանության առաջաբանից, Հ. Բ. Սարգսեան, Երկհարկւրամեայ գրականական գոր-
ծունէութիւն Վենետիկ Միթիթարեան միաբանութեան, էջ 140:

⁵ Մ. Աւգերեան, Դեղ Կենաց, էջ 220:

⁶ Մենք այստեղ շենք հիշում 1687 թ. հրատարակված «Պարզաբանութիւն
հոգեբնուագ սաղմոսաց» գիրքը, որ Հ. Աճառյանի կողմից դասված է առաջին ան-
գամ մաքուր լեզվով գրված աշխատութիւնների շարքին, որովհետև դա, ինչպե-
ս ինքն էլ է նկատում, խառնուրդ է արևմտահայ և արևելահայ աշխարհաբարների.
մեր խոսքը այստեղ արևելահայերենից վերջնականապես սահմանազատված արև-
մտահայ աշխարհաբարի մաքրության մասին է:

⁷ Տե՛ս Հ. Բ. Սարգսեան, Երկհարկւրամեայ գրականական գործունէութիւն
Վենետիկ Միթիթարեան միաբանութեան, էջ՝ 135:

Դապատասխան հայերեն ձևերը, իսկ թուրքերեն բառերը չեն նրանց կողքը տրվես բացատրություն: Ահա ինչ է գրում այդ մասին Հ. Զոհրապյանը 1803-ին Վենետիկում հրատարակած իր Աստվածաշունչի պատմության առաջարանում.

«Իսկ աշխարհաբար շարագրութիւն որ ըսինք՝ նայեցանք որ շուտ հայերեն ըլլայ, առանց այլազգի բառեր մէջը խառնելու, տաճկերէն կամ պարսկերէն կամ ֆրէնկերէն, ինչպէս որ հիմակու յամանակս մեր ազգը ինչ ազգի հետ որ բնակեր է նէ՝ կամաց կամաց անոր լեզուէն առեր խառներ է իր հայերէնին մէջը որ ասով շատ աւրուեր է աշխարհաբար լեզունիս ու անանկ փոխվեր է որ մէկ տեղացին մէկալին ըսածը դժվար կը հասկընայ: Անոր համար մենք շանացինք որ այսպէս չըլլայ, հապա՝ որչափ կարելի է ամէնքը հասկընան. ուստի ոճն ալ Ստամպուլցիի հայերէնի կերպով բռնեցինք որ բուն Հայաստանցոց ալ աւելի մօտէ, ու պարսկահայք ալ չը հասկընան. միայն թէ՝ ուր տեղ որ խօսք այսպիսի աշխարհաբարէն կը պակսէր՝ ան տեղը գրարառէն առած բառեցուցինք ու տեղ տեղ այսպեսով մեկնելով զատ տաճկերէնը քովը դրինք»¹:

Զոհրապյանին հետեւեցին ուրիշներ և աշխարհաբար որոշ աշխատութիւններում, ինչպես Ինճիճյանի «Յղանակ Բիւղանդեան»-ում և «Դարապատում»-ում, Բժ. Մ. Բեստենի «Կրթութիւն Բժշկական արուեստի» գրքում թուրքերեն բառերի մեծ մասը փակագծերի մեջ առնվեցին հայերեն համապատասխան բառից հետո, այսպես հիմ (թէմէ), թորակ (էօլէֆէ), կատակ (շախայ), ջորի (խաթըր), զոյգ (չիֆտ), ժողովք (մեճլիս), տհաս (խամ), ցեխ (շամուռ), յամառոտ (ինատճի), խուճապարող (ալիւշաճէլէ), որկոր (պօղազ), տակափն (տահա) և այլն: Այլ հեղինակների մոտ թուրքերեն բառերը հետևում են հայերեն համապատասխան բառին առանց փակագծերի. այսպես 1815 թ. Դիտակ Բիւղանդեանում կարդում ենք.

«Նաբօլէօնը կուզէ արատավորել լեքելեմիշ ընել գէշ անունով ծր»²:

«Ամմէն սեզան զիաֆէթ որ կընեն լեհաստան աս ձանովս կը մննայ Ապրի Նափօլէօնը»³:

«Ես շունիմ ան սուտ համեստութիւնը որ հրաժարիմ աստնկ մեկ առիթէ ֆուսանտէ մը»⁴:

¹ Միհրան Հովհաննէսեան, Քննական պատմութիւն ԺԹ դարու հայ գրչութեան, էջ 33:

² Դիտակ Բիւղանդեան, Վէնետիկ, 1815, էջ 156:

³ Նույն տեղում, էջ 157:

⁴ Նույն տեղում, էջ 173:

Այդպես է վարվում նաև Գ. Ավետիքյանը նույն թվին հրատարակած իր Քերականության մեջ.

«Առաջարանութեան մեջ ծանուցինք թէ ութը մասանց առջինը Անունն է, ինչպես թէ ամմէնուն արմատը՝ քեօքն է»¹:

«Ըսածովըս իմացվեցաւ որ բանը կամ խօսվածքը երկու իրդունի, մէկմը բառերը՝ ինչպես նիւթ մը, քերէսթէ, մեկ մալ անոնց շարքը՝ ինչպես թէ կարգով տեղավորելը, նիզամը, եօռտամը»²:

Պոլսահայերը շփման մեջ էին նաև ֆրանսիացիների և իտալացիների հետ, որոնք գաղութներ ունեին Պոլսում. դրա հետևանքով պոլսահայ աշխարհաբարում թուրքերեն փոխառությունների հետ միասին մտել էին նաև որոշ չափով ֆրանսերեն և իտալերեն բառեր, ինչպես՝ ճենեռալ, օֆֆիշիալ, պաթթալիօն, ռեճճիմէնթ, բաթէնթա, քօքքարտա, մարէշալ, ռիչեթթա, մինութ և այլն: Սկզբումքը գործադրվեց նաև այս կարգի բառերի նկատմամբ և վերևը հիշված հեղինակները սկսեցին գրել կենցաղագետ (բօլիդիքօ), փաստաբան (ավօքադ), նորելուք (մօդա), ջերմաչափ (թէռմմէթոս), վտանգաւոր (բէռնիշիօզա) և այլն:

1839 թվականին «Շտեմարան»-ի բողոքական հրատարակիչները մի քայլ առաջ գնացին աշխարհաբարի մշակման հարցում, նրա համար անհրաժեշտ պայման համարելով օտար բառերը վտարել տեքստի միջից և միայն էջի ներքևը դժվարիմաց բառերը թուրքերենով բացատրել: Նրանց նպատակները շարադրված են «Շտեմարան»-ի առաջարանում.

«Առէկ գիտէնք աշխարհաբառ լեզուն յառաջացումելու հարկաւորութիւնը օր ըստ օրէ անիկա սրբագրութեամբ մշակելով: Ուստի խնամով պիտի զգուշանանք այլազգի բառեր չի գործածել մեր գրութեանը մէջ, առաւել ընտրելով հարկատրած տեղը գրաբառ դժուարիմաց բառերը էջին տակը տաճկերէն բառերով բացատրել, քան թէ անոնք փարենթադիգի մէջ մեր խօսքին մէջը խօթելով պլըշտկել անիկա: Ասանկով աս գործս կարդացողները ամսէ ամիս օգնութիւն պիտի գտնան ասկէց իրենց լեզուին էվելօք տեղեակ ըլլալուն»:

«Շտեմարան»-ից դեռ շատ առաջ 1819 թվին Մինաս Բժշկյանի «Պատմութիւն պոնտոսի» աշխատությունը մաքուր լեզվով է: Մաքուր է նաև 1828-ին Փարիզում հրատարակված Հ. Զոհրապյանի Նոր

¹ Գ. Ավետիքեան, Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ լինեալիկ, 1815, էջ 4:

² Նույն տեղում, էջ 2:

³ Շտեմարան պիտանի գիտելեաց, 1893, էջ 1:

կտակարանի և 1833-ին վեցնետիկում հրատարակված Հ. Եփրեմ վարդապետի «Պատմութիւն շորից ինքնակալութեանց» գրքի լեզուով:

Այսպիսով, 19-րդ դարի առաջին 40-ամյակում արդեն գիտակցվում է արևմտահայ աշխարհարարը կանոնավորելու և դրա համար առաջին հերթին այն օտար բառերից ազատելու անհրաժեշտութիւնը. այդ ուղղությամբ թափվում են ջանքեր, որոնք որոշ հեղինակների մոտ հանգեցնում են դրական արդյունքի: Սակայն այս բոլորը անհատական փորձերի շրջանից դուրս չեն գալիս. չկա միասնական պայքար աշխարհարարը մաքրելու օտարաբանություններից. այդ է պատճառը, որ հաճախ մաքուր աշխարհարարով գրական նմուշին հաջորդում է թուրքերենախառն լեզվով գրված մի ուրիշը: Որպես ապացույց մեր ասածին, բերենք հատվածներ 1819 թվականին հրատարակված Բժշկյանի «Պատմութիւն Պոնտոսի» աշխատութիւնից և 1820-ին գրված Գրիգոր վարժապետ Փեշտիմալճյանի «Յայտարարութիւն»-ից:

1.—«Այս անուանի բերդին հին ատենի նշանն է նաւի երկաթ. թուի թէ հին բնակիչները քարաշէն նաւահանգիստը շինելէն ետեայս նշանը դրին՝ շատ նաւեր հոն յաճախելուն համար, ուստի թէ բերդը և թէ բոլոր քաղաքը հին ատենն ի վեր շատ փոփոխութիւններ տեսնէ. և շատ թագաւորներ շէնքեր շինելու և նորոգութիւններ ըրել են. անոր համար մինչև ցայժմ հաստատում է բերդը. և տներն են ամուր քարաշէն, թէպէտ շատ բարձր չեն. մասնաւանդ քրիստոնէից. որոնք բերդին մէջ տուն չեն կրնար դնել և բնակիլ»¹:

2.—«Յիրաւի մենք ալ կը վկայենք թէ գոլէճցի ստախօսները խաբեցին այն տիւ պիլմէզ եպիսկոպոսը, ղէրէ այսպէս կուրաբար գրուածը հասարակ մարդու պիլէ թէօհմէթ է, ո՞ւր մնաց Հոռվմայու աստուածաբան արքեպիսկոպոսի մը. լաքին խիստ թաւաճիւղ քաշելու մասլահաթ չէ»²:

Այդ երևույթը նկատվում է երբեմն միևնույն բնագավառի լեզվական նմուշներն ուսումնասիրելիս: Այսպես, Պոլսի Բերա-Բանկալի թիի գերեղմանատանը 1836 թվականին հորինված հետևյալ տապանադիրը մաքուր արևմտահայ աշխարհարարով է.

«Անօրէն մահուան ուժն ինծի հասա:

Անուշիկ արևս ինծի շատ տեսա:

Կաղաչեմ փրկիչս, այս խավար բանտէն

Անմահ կեանքով զիս ողջնցուր նորէն

¹ Մ. Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, Վէնետիկ, 1819, էջ 73.

² Ա. Պէրպէրեան, Պատմութիւն Հայոց—Կ. Պօլիս, 1871, էջ 45.

Հարս եկայ քեզ ես Յիսուս իմ Յիսուս
 Պզտիկ է տարիքս, բայց մեծ է յոյսըս¹։
 1839 թվականին վերաբերող նույն գեթեղմանատանը հայտնա-
 քերված մի ուրիշ տապանագիր թուրքերենախառն լեզվով է-
 «Ով մարդ ո՛ւր ես՝ գործքդ ի՞նչ է,
 Եկար աշխարհք մահըդ հետ է։
 Ինչ սերմի՞ք առած ես նէ,
 Լեցուն շահը տալու տեղն է։
 Ես Յարութիւնս՝ ողջ ի՞նչ տեսայ։
 Ենդմիշ երկու տարի կեցայ։
 Ուղղափառի զաւակ եղայ։
 Կեանքս պրծաւ հողը մտայս²։

Լեզվի մշակման հարցն արծարծելիս, այս ժամանակաշրջանի
 հեղինակները խոսել են միայն այն օտարաբանություններից ազա-
 տելու անհրաժեշտության մասին. զարգացման այլ ուղիներ նրանց
 կողմից չեն նշվել։ Մխիթար Սեբաստացու քերականության լույս
 տեսնելուց հետո մինչև 1864 թվականը³, արևմտահայ մտավորա-
 կանները զբաղվեցին միայն գրաբարի քերականություն հորինելով։
 Այդ իսկ պատճառով թեև այս շրջանում պոլսահայ աշխարհաբարն
 իր բնական զարգացման ընթացքում ձգտում է դեպի քերականական
 ձևերի միօրինակացում, սակայն նա վերջնականապես նորմավոր-
 ված չէ։ Հիշենք, այդ կապակցությամբ, աշխարհաբարի կողմնակից
 և պաշտպան՝ Գրիգոր Օտյանի կարծիքը մինչև 19-րդ դարի 50-ական
 թվականները աշխարհաբարի վիճակի մասին.

«Պոլսի հայերէնը ինչպես յուրիշ աշխարհիկ հայերէններն ալ,
 շատ թէև միաներէն նուազ, անկարգութիւններ ունի, և շատ ալ
 օտար ու մտրացածոյ ոճեր ու բառեր»⁴։

Նախ և առաջ կարգավորված չէ հնչյունաբանությունը, Այդ աշ-
 խարհաբարում մեծ տեղ են գտնում բարբառային, հատկապես Պոլ-
 սի բարբառին հատուկ ձևեր. խնչպես՝ անկաճ (ակամչ), ճշգոհ (դըժ-

¹ Բազմավեպ, 1929, էջ 20։

² Նույն տեղում։

³ 1847 թ. էլիաս Բիկս ամերիկացի միսիոները գրել է արևմտահայերենի մի քերականություն անգլերեն բացատրությամբ։ Մենք այստեղ չենք հիշատակում ն. Ռուսթյանի, Օտյանի և Քեկրյանի 1859-ին հրատարակած «Ուղղափառութիւնը», որի մասին կխոսվի հետագայում, որովհետեւ այդ աշխատությամբ ստեղծվեց մի նո-
րաձև աշխարհաբար, որ տարածում չունեցավ։

⁴ Գ. Ս. Օտյան, Առաջարկութիւն աշխարհաբար լեզուն կանոնադրել և հասա-
րակաց լեզու բնելու վրայ։ Արշալոյս Արարատեան, 1852, № 419։

գորհ), պատիճ (պատիժ), խաւրել (ուղևորել), էկուր (եկուր), հար (հայր), ձան (ձառ), ասօր (այսօր), ձառք (ձեռք), ախպար (եղբայր), խաւղ (խաղող), լուս (լոյս), ծուլ (ծուլլ), ծար (ծայր), իրեք (երեք), ինչեցունել (իչեցնել), շիտես (չգիտես), օռթնեալ (օրհնեալ), ախպուր (աղբիւր) և այլն:

Բարբառային տարրերը գերակշռում են Մ. Ավգերյանի 1810-ին հրատարակված «Բանաստեղծութիւն շորս ետքերնուս վրայ» և «Դեղ կենաց» աշխատութիւնների, ինչպես նաև Հ. Զոհրաբյանի 1828-ին Փարիզում հրատարակված նոր կտակարանի լեզվում: Համեմատաբար քիչ է նրանց թիվը Օզունուխյանի «Կրթութիւն բժշկական արուեստի» (1806 թ.), Ավետիքյանի քերականութիւն (1815 թ.), Փափազյանի «Երկրաչափութիւն գործնական»-ի (1817 թ.), Շտեմարանի (1839 թ.) լեզվում:

Որոշ հեղինակներ գործածում են միևնույն բառի և բարբառային, և գրաբարյան ձևը. այսպես, Ավգերյանի «Դեղ կենաց»-ում ունենք՝ ծար և ծայր, լուս և լոյս, եկուր և էկուր, պատիճ և պատիժ, հար և հայր, ձառք և ձեռք, մեծութիւն և մենծութիւն: Երբեմն նույն նախադասութիւն մեշ երկու ձևերն էլ հանդիպում են. օրինակ՝

«Անոնք ձայնիս դէմ ձան կուտան»¹:

Միևնույն բառի երկու ձևերի օգտագործման դեպքեր կան նաև Ինճիճյանի լեզվում: Բարբառային ձևերի օգտագործման չափը կախված է յուրաքանչյուր գրողի ճաշակից և կամքից: Կա ձգտում նրանք փոխարինելու համապատասխան գրաբարյան ձևով, սակայն դա հասցնում է միայն նրանց թվի որոշ չափով նվազեցմանը:

Ցույց տալու համար այդ ժամանակաշրջանի լեզվի քերականական տեսակետից վերջնականապես նորմավորված չլինելը, բավականանաք մի քանի օրինակներ բերելով 40-ամյակի վերջում լույս տեսած Տերոյենցի «Ընթացք հայերէն դպրութեան» աշխատութիւն և «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդեսի լեզուներից: Այդ հրատարակութիւններում հանդիպում են պայմանի պարագա երկրորդական նախադասութիւն պարունակող այսպիսի բարդ ստորագոյնական նախադասութիւններ:

1. «Անոնք թէ որ քովերնին ձայնաւոր չըլլայ նէ՝ չեն կրնար ձայն հանել»²:

2. «Անանկ որ մեկ բառ մը թէ որ ծայրը յոգնականի նշան է գիրը չառնէ նէ՝ անիկայ ոչ ց կառնէ և ոչ ա»³:

¹ Մ. Ավգերեան, Դեղ կենաց, 1810, էջ 64:

² Տերոյենց, Ընթացք հայերէն Դպրութեան, Օրթագիւղ, 1838, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 18:

3. «Յոյնները և Հռովմայեցիները կը կարծէին թէ հոգին հանգիստ կամ, երջանիկ չըլլար բայց եթէ մարմինը կամ էրվի և կամ թաղվի նէ՞»¹ .

Այս երեք նախադասութիւններէ մեջ ամենաճիշտ կառուցվածք ունեցողը անկասկած առաջինն է. (ժամանակակից արևմտահայ գրական լեզվում այդ նախադասութիւնը կլինէր՝ «ասոնք, եթե քովերնին ձախաւոր չըլլայ, չեն կրնար ձայն հանել»): Երկրորդ նախադասութիւն մեջ ավելորդ է անիկա դերանունը, որ փոխարինում է բառ մը գոյականին: Երրորդ նախադասութիւնը առաջինների հետ համեմատած բոլորովին տարբեր և միևնույն ժամանակ սխալ կառուցվածք ունի: Երկրորդական նախադասութիւն մեջ թէ ուր (եթե) ստորադասական շարկապի փոխարեն օգտագործված է բայց եթէ. բացի դրանից, այդ նախադասութիւն բայերը հաստատական ձևով են փոխանակ ժխտական ձևով լինելու: Ժիշտը կլինէր՝ «Յոյնները և Հռովմայեցիները կը կարծէին թէ հոգին հանգիստ կամ երջանիկ չըլլար թէ որ (կամ եթէ) մարմինը չէրվի և կամ չի թաղվի (նէ)»...

Վերոհիշյալ հրատարակութիւնների լեզվում անմիօրինակութիւն նկատվում է նաև որոշիչ երկրորդական նախադասութիւնների կառուցվածքում, ինչպես այդ ցույց են տալիս հետևյալ օրինակները:

1.—«Ընդարձակ անտառներուն մէջը անձրևային եղանակներուն տնտնի ծառեր ալ կան՝ որոնց գոյացութիւնը առաւել կակուղ է»²:

2.—«Բելցօնի քանի մը մոմիաներ տեսաւ՝ որոնց ոտքերը ներկած կաշիէ հողաթափներ կային»³:

3.—«Արտուղի են այն բայերը որ կատարեալնին ներկայէն ելլելու կերպը՝ վերոյգրեալներուն հիշ մէկոն չի յարմարիր»⁴:

4.—«Անուններ ալ կան որ վերջի գրերնին ք է»⁵:

5.—Ուրիշ տեսակ միջատ կենդանի մըն ալ կայ՝ որ իր շարժելուն արագութիւնը ըստ մասին կըհաւասարի երեկին շարժմանը»⁶:

Առաջին երկու նախադասութիւններում երկրորդական նախադասութիւնը գլխավորի հետ կապվում է ուրեց հարաբերական դերանունով, որի միշտցով էլ արտահայտված է պատկանելութիւնը:

¹ Շախմարան պիտանի գիտելեաց, Զմիւռիայ, 1840, էջ 5:

² Նույն տեղում, 1839, էջ 101:

³ Նույն տեղում, 1840, էջ 87:

⁴ Տերոյենց, Ընթացք հայերէն դպրութեան, 1838, էջ 117:

⁵ Նույն տեղում, էջ 21:

⁶ Շախմարան պիտանի գիտելեաց, 1839, էջ 6:

Վերջին նախադասություններում, երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է առ ստորադասական շաղկապով, իսկ պատկանելությունն արտահայտված է երրորդ և չորրորդ նախադասություններում փոխանուն սեռականի միջոցով (կատարեալին, զըրերին), իսկ հինգերորդ նախադասության մեջ իբրեւանվան միջոցով:

Վերևը բերված բոլոր օրինակները վկայում են, որ այդ ժամանակաշրջանում լեզվական որոշ ձևերի վերաբերյալ կային տարբեր գիտակցումներ, որոնցից ոչ մեկը դեռևս չէր հաղթանակել, որովհետև լեզվի մշակման հարցը սուր բնույթ չէր ստացել:

19-րդ դարի առաջին 40-ամյակը կարելի է բնութագրել որպես արևմտահայ լեզվի զարգացման խաղաղ ժամանակաշրջան, որի ընթացքում մի շարք հանգամանքներ և տրամադրություններ նախապատրաստում են հետագա տարիներին ծավալված գրապայքարը:

Ա. Աշխարհաբարի ֆունկցիաների ընդլայնումը մի կողմից, գրաբար բազմաթիվ հրատարակությունները մյուս կողմից պատճառներ են ստեղծում երկու լեզուների կողմնակիցների բախման համար. երկու լեզուներից մեկնումեկը պետք է հաղթանակեր և դառնար միակ գրական լեզու հայ ժողովրդի արևմտահայ հատվածի:

Բ. Գրաբարի և աշխարհաբարի գերի վերաբերյալ այս շրջանում կան երկու կարգի կարծիքներ: Ոմանք կողմնակից են, որ գրաբարն օգտագործվի որպես գրավոր լեզու: Վերաբառ լեզուն սորվողը երկու կերպ կրնայ ըլլալ. մէյ մը անոնք են, որ գրաբառ լեզուով գրել ու շարադրել կուզեն. ասոնք ինչպե՛ս քերականութիւն չի սորվի՞ն և քերականութեան կանոններով շարադրութիւն ընել չի վարժին՝ չեն կըրնար սորվիլ: Ուրիշներ գիտակցելով հանդերձ, որ գրաբարն ավելի բարձր և ազնվական լեզու է քան աշխարհաբարը ընդունում են նրա դժվարամատչելիությունը ժողովրդական խավերի համար. նրանք ցավելով նկատում են, որ ժողովուրդը ավելի շուտ է սովորում իտալերեն կամ ֆրանսերեն լեզուները քան գրաբարը: Այս կարգի մտածողների կարծիքով ժողովրդի համար անհրաժեշտ է միայն հասկանալ գրաբարը. թեև որովհետև հիմնական ատենը մեր ազգին մեջը միայն գրաբառ հասկընալը պէտք է, որ գրքերը հասկընան, վարպետներուն հոգը աս պիտոր ըլլայ, որ կարճ ու հեշտ ճամփով մը տղոց գրաբառ հասկընալը սորվեցնենք²:

¹ Նդանակ Բիւզանդեան, Վենետիկ, 1815, էջ 113:

² Նույն տեղում:

Աշխարհարարը նրանք համարում են աղքատ լեզու. ոմանք այն օգտագործում են միայն հարկին ստիպմամբ, որովհետև գիտական բնույթ ունեցող աշխատությունները նրանց կարծիքով պետք է գրաբարով շարադրվեն. ահա ինչ է գրել Հ. Ղ. Ինճիճյանը իր «Դարապատումի» առաջարանում 1824 թվին.

«Զայս գործ բազմաշխատ ի բարբառ գրոց հիառածոյ գոգցես արժան էր արտադրել, բայց թախանձանք ընթերցասիրաց անտեղեկ եղելոց գրաբարին՝ սերտ ըղձակերտեալք ի լուր ընթերցուածոյ բանի պատմութեանց ոչ ներեցին մեզ զրկեալս կացուցանել ի ճաշակացն՝ որոց փափագէինն, այլ կամայ ակամայ հարկ յանձին կալեալ յաշխարհիկ յօրինել բարբառ, որ ապաքէն տառնապատիկ առաւել ծանրացոյց մեզ աշխատութիւն բանի՝ գոլով լեզու անկիրթ աղքատին...»¹

Ուրիշներ, ինչպես Շտեմարանի հրատարակիչները, աշխարհաբարը զարգացնելու և այն իր անկանոն վիճակից դուրս բերելու հարցն են առաջ քաշում. սակայն, ինչպես վերոն ասվեց, այդ ժամանակ աշխարհաբարի մշակման համար պայքար չի ծավալվում:

Գ. Այս շրջանում ոչ բոլորն էին, որ գրաբարը դիտում էին որպես մեռած լեզու. Սակայն հատկանշական է, որ որոշ գրաբարագետներ ի կողմից նա արդեն գիտակցվում է որպես այդպիսին:

Այսպես, Գ. Ավետիքյանը 1819 թվականին հրատարակված իր քերականության առաջարանում գրաբարը համեմատում է լատիներենի հետ և գտնում, որ ինչպես եվրոպացիների մոտ լատիներենը դադարել է լատիներենով ուսուցանվել և յուրաքանչյուր երկրում ավանդվում է ժամանակի լեզվով, օրինակ՝ Ֆրանսիայում՝ ֆրանսերենով, Իտալիայում՝ իտալերենով, այնպես էլ գրաբարը պետք է ուսուցանվի աշխարհարար լեզվով, որ բոլորին հասկանալի է: Գրաբարը լատիներենի կարգը դասելը նշանակում է լոկայն ընդունել նրա մեռած լեզու լինելը:

Այս տրամադրությունները 19-րդ դարի սկզբին ավելի սուր թնույթ ընդունեցին առաջ բերելով լեզվական պայքար գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև:

¹ Հ. Ղ. Ինճիճյան, Դարապատում որ է աշխարհաբար կամ ընդհանուր պատմութիւն, 1824, Վննեթիկ, էջ 12:

В. Л. АДЖЕМЯН

СОСТОЯНИЕ ЗАПАДНО-АРМЯНСКОГО АШХАРАБАРА
В ПЕРВОЕ СОРОКОЛЕТИЕ 19-го ВЕКА И ПОДГОТОВКА
К БОРЬБЕ ЗА АШХАРАБАР

Р е з ю м е

В первое сорокалетие 19-го века в западном секторе армянского народа в качестве литературного языка употребляются как грабар так и ашхарабар. На грабаре издаются критические и переводные работы, как и практические руководства для повседневной жизни. Однако для большинства народа язык наших предков уже не был доступным языком; он должен был уступить свое место ашхарабару, еще неорганизованному, но жизнеспособному. Функции последнего значительно расширяются в течение первых сорока лет 19-го века.

В этот период, среди разных диалектов, широкое распространение получает константинопольский; что уже в 18-ом столетии начал превалировать над другими диалектами.

Авторов, пишущих на этом ашхарабаре, беспокоит загроуженность его иноязычными, в особенности турецкими, словами и оборотами. Выработка западно-армянского ашхарабара начинается с попытки его очистки. Некоторые авторы ставят однозначные иноязычные слова рядом с армянскими, как объяснение. Другие вовсе не употребляют их. Однако ашхарабар окончательно не очищается от этих слов, так как в этот период не ведется общей организованной борьбы за его разработку. По той же причине ашхарабар трамматически не нормируется окончательно.

Первое сорокалетие 19-го столетия является мирным периодом развития западно-армянского ашхарабара, периодом, в течение которого распространение ашхарабара в счет грабара с одной стороны, многочисленные издания на грабаре с другой стороны, как и различные мнения о роли грабара и ашхарабара готовят последующую борьбу между сторонниками грабара и ашхарабара.